Doi: 10.56737/2953-7843-2025.08-75

ԱՎԵՏԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Պատմական գիտ. թեկնածու

ՎԱՆԻ ՆԱՀԱՆԳԻ ՌԱԶՄԱ-ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ, ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՒ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՉՆՉԱՑՄԱՆ ՀԱՐՑԸ 1914–1915 ԹԹ.[1]

Ա. ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՁՈՀԵՐԸ

Առաջին աշխարհամարտի տարիներին Վանի նահանգում ապրում եւ ստեղծագործում էին բազմաթիվ հայ մտավորականներ, հոգեւորականներ եւ ռազմաքաղաքական գործիչներ, որոնք շոշափելի ազդեցություն ունեին Վանի հասարակական-քաղաքական մտքի եւ մշակույթի զարգացման գործում։ Հետեւաբար, իթթիհատական կառավարությունը 1914–1915 թթ. ցեղասպանության իր անարգել քաղաքականությունը Վանի նահանգում կենսագործելու ճանապարհին փորձում էր ոչ միայն հրոճարակ դարձնել հայկական գյուղերը եւ կոտորել տեղի հայ ազգաբնակչությանը, այլեւ վերացնել նաեւ նահանգի աչքի ընկնող հասարակական, ռազմական-կուսակցական, մտավոր եւ հոգեւոր հայ գործիչներին[2]։ «Միություն եւ առաջադիմություն» կուսակցության 2-րդ քարտուղար, հայերի ցեղասպանության գլխավոր հանցագործներից մեկի՝ Բեհաեդդին Շաքիրի օրագրից պարզվում է, որ իթթիհատի ղեկավարությունը դեռեւս 1914 թ. սեպտեմբերին արդեն որոշել էր ոչնչացնել հայ երեւելիներին[3]։ Վանի նահանգապետ Թ. Ջեւդեթը ենթադրում էր, որ Վանի կուսակցական գործիչներին եւ մտավորականությանը գլխատելով, նա իր առջեւ կունենար «ոչխարների մի հոտ», որին հեշտությամբ կառաջնորդեր սպանդանոց։

---

[1]* *Ստացվել է՝ 2.08.2025, գրախոսվել է՝ 2.09.2025։ էլ. հասցե՝* avharutunyan@mail.ru:

[2] *Իբրեւ կարեւոր հարց խնդրին տարբեր առիթներով եւ կողմերից անդրադարձել ենք նաեւ անցյալում՝ այժմ ակնակալելով ավելի մեծ կենտրոնացում եւ տարածում. տե՛ս օր.՝ Վանի նահանգի հայ ռազմական-կուսակցական գործիչների եւ մտավորականության ոչնչացումը. Հիրճի կոտորածը, «Հայկական բանակ ՌԴՀ», 2015, թիվ 1–2 (83–84), էջ 164–175, Վանի նահանգի գավառներում հայկական կոտորածների սկզբնավորման հարցի շուրջ, «Բանբեր հայագիտության», հ. 2, 2022, էջ 39–61 եւ այլն։*

[3] *Տե՛ս* Վ. ՓԱՓԱԶԵԱՆ, *Համաշխարհային պատերազմը եւ Տարօնի աշխարհը 1914–1915, ա. տ. եւ թ., էջ 23։*

Երիտթուրքերի ցեղասպան քաղաքականությանը զոհ գնացած առաջին վանեցի մտավորականների թվում էին՝ բանասեր Հովհաննես Կուլօղլյանը եւ Վանի ռուսական հյուպատոսի թարգման՝ Ղեւոնդ Սրվանձտյանը, որը 1914 թ. պատերազմի նախօրյակին աքսորվեց Փոքր Ասիայի խորքերը, ուր եւ անհետ կորավ։

1914 թ. աշնանը Շատախում Կորտ բեյը դավադրություն կազմակերպեց երիտասարդ դաշնակցականներ՝ Հովսեփ Զոլոյանի եւ Սամվել Մեսրոպյանի դեմ, որը սակայն ավարտվեց անհաջողությամբ[4]։

1914 թ. նոյեմբերի սկզբներին Վանի նախկին կուսակալ Հ. Թահսին բեյի դեմ դավադրություն կազմակերպելու ամբաստանությամբ, իթթիհատի էրզրումի ներկայացուցիչ Հիլմի բեյի հրամանով Վանից Կովկաս մեկնելու ճանապարհին՝ Բայազետի մոտ սպանվեց Վանի դաշնակցական ներհուն գործիչներից մեկը, Խանասորի արշավանքի մասնակից՝ Թորոս-Գալուստ Ալոյանը[5]։ Իշխանությունները կարծում էին, որ Ալոյանը «խիստ կարեւոր գաղտնիքներ ու հրահանգներ կը տանի իր հետ... *(խոսքը՝ դաշնակցության 1914 թ. էրզրումի 8-րդ ժողովի որոշումները Կովկաս հասցնելու եւ կամավորական շարժումը կասեցնելու մասին էր – Ա. Հ.)»[6]։*

1914 թ. վերջերին էրզրումում սպանվեց հմուտ թուրքագետ եւ օրենսգետ, Վանի հայտնի փաստաբան Նշան Գալճյանը[7]։

1914 թ. դեկտեմբերի սկզբներին դավադրություն կազմակերպելու մեղադրանքով ոստիկանություն բերման ենթարկվեց եւ սպանվեց Շատախ գավառի Խումար գյուղի հայրենասեր, խոհեմ եւ քաջ հեղափոխական՝ հայդուկ, հայ-քրդական համերաշխության առաքյալ, Վազգենի՝ Տիգրան Տերոյանի հեղափոխական սան՝ Պետրոսը, որը կառավարության աչքի փուշն էր եւ վայելում էր շրջակա քրդական գյուղերի պատկառանքն ու հարգանքը՝ հաճախ իր քաջությունն ու փորձառությունն օգտագործելով քրդերի պաշտպանության նպատակով։ Սպանության հետքը կոծկելու համար, իշխանությունները կեղծ հրացանազարկ կազմակերպեցին

---

[4] *Տէս «Հայրենիք ամսագիր», Բոստոն, 1924 ապրիլ, թիւ 6, էջ 96։*

[5] *Տէս* Մ. ԱՐՔ. ՕՐՄԱՆԵԱՆ, *Թիւրքահայ աղէտը. պատմական փաստաթուղթեր, Ա., Տեղեկագիր, Ս. էջմիածին, 1919, էջ 32, նաեւ* Ա.-Դ.Օ, *Մեծ դէպքերը Վասպուրականում 1914–1915 թւականներին, Երեւան, 1917, էջ 92։*

[6] Վ. ՓԱՓԱԶԵԱՆ, *նշ. աշխ., էջ 23։*

[7] *Տէս* Մ. ԱՐՔ. ՕՐՄԱՆԵԱՆ, *Թիւրքահայ աղէտը. պատմական փաստաթուղթեր, Ա., Տեղեկագիր, էջ 36, նաեւ՝* Ա.-Դ.Օ, *նշ. աշխ., էջ 92։*

Պետրոսի հայրենի գյուղում, քրդերին հրահրեցին թալանի, ապա կատարված մասին տեղեկացրին Շատախի կայմակամին՝ պատճառաբանելով, որ Պետրոսն իբր թե ֆիդայիների ուղեկցությամբ հարձակվել էր պահականոցի վրա եւ սպանվել։ Սակայն շուտով, կատարված պաշտոնական քննությունը բացահայտում է ոստիկանների կազմակերպած դավադրության գաղտնիքը։

Բ. ԻՇԽԱՆԻ ԴԱՎԱԴՐԱԿԱՆ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ժողովրդին վիճակված դաժան ճակատագրի հարվածներից անմասն չմնացին նաեւ իթթիհատականների հետ Վանում «խոհեմության» *կարգախոսի հեղինակները, որոնց երիտթուրքերը նույնպես ձերբակալեցին, աքսորեցին եւ ոչնչացրին։*

Շատախի դեպքերի առիթով Թ. Ջեւդեթը դիմեց փորձված միջոցի՝ ստեղծելով հաշտեցնող մի հանձնաժողով, որին հայերը սիրահոժար համաձայնեցին։ Այդ նպատակով նա ապրիլի 2-ին (ըստ Օ. Մխիթարյանի եւ Հ. Կոսոյանի՝ ապրիլի 3-ին)[8] իր մոտ է կանչում Վանի դաշնակցական ճանաչված գործիչներ՝ Ա. Վռամյանին ու Արամին եւ ինչպես ինքն է նշում «իրենց կարծիքը առնեմ շատ կարեւոր խնդրի մը մասին»[9]*, այն է՝ Շատախում հայերի ու քրդերի միջեւ ծագած խռովությունը վերացնելու կապակցությամբ։ Նա առաջարկում է, որ Իշխանը՝ դաշնակցության Վանի ռազմական ուժերի կազմակերպիչը, որը նախասահմանադրական շրջանում գործել էր Շատախում եւ համահավասար հեղինակություն էր վայելում ինչպես հայերի եւ թուրքերի, այնպես էլ քրդերի շրջանում, պետք է ուղեւորվեր Շատախ, այնտեղ խաղաղություն հաստատելու, երկրամասը* «հանդարտեցնելու» *եւ հայերի* «ապստամբությանը» *վերջ տալու առաքելությամբ։ Մինչ այդ, Շատախի հայերը վերջնագիր էին ներկայացրել թուրքական իշխանություններին՝ ձերբակալված Հովսեփ Ջոլոյանին ազատ արձակելու համար[10]։ Ըստ արխիվային փաստաթղթերից մեկի Իշխանի մեկնումը Շատախ՝* «իբրեւ հաշտութեան առաքեալի, ոչ միայն դէպքերու ազդեցութիւնը մեղմած, այլ նաեւ ամենէն անվստահ ու

---

[8] *Տե՛ս* Օ. Մ Խ Ի Թ Ա Ր Ե Ա Ն, *Վանի հերոսամարտը. հերոսամարտը 1915 ապրիլի 7 – 1915 մայիսի 3, Սոֆիա, 1930, էջ 39, նաեւ՝* Հ. Կ Ո Ս Ո Յ Ե Ա Ն, *Վան-Քաղաքամիջի Ապրիլեան կռիւները, Երեւան, 1992, էջ 27։*

[9] Հ. Պ Ա Ռ Պ Ի, *Սարսափի երկրին մէջ. նահատակ Հայաստան, Կ. Պոլիս, 1919, էջ 81։*

[10] *Տե՛ս* Ա.-Դ Օ, *նշ. աշխ., էջ 155։*

կասկածամիտ մարդն ալ սկսած էր հաշտուիլ այն մտքին հետ, թէ պէտք է ամեն ինչ զոհիլ, բաւարարիլ կառավարութեան ախորժակները, փրկելու համար ազգային գոյութիւնը...»[11]։

Այս իրադարձության մասին մենք հստակ պատկերացում ենք կազմում Շատախի դաշնակցական գործիչ Հովսեփ Խլղաթյանի՝ ՀՅԴ Վասպուրականի կենտրոնական կոմիտեին ուղղված 1915 թ. ապրիլի 5-ի նամակից։ Իրականում, ոճրագործ «չմեղ ասիացի» կուսակալը խաբում էր հայերին, քանի որ ընդհարումը ոչ թե քրդերի, այլ իթթիհատական կառավարության հետ էր։

Նահանգապետի առաջարկությունը բարեմտաբար ընդունվում է Իշխանի կողմից եւ ստեղծվում է ութ հոգուց բաղկացած խաղաղարար երկկողմ մի մարմին։ Իշխանը՝ «դաշնակցական կոմիտեի ռազմիկ դեմքը», *խիզախ մի զինվոր, վանեցի երեք թիկնապահների՝ շատախցի Միհրան Տեր-Մարգարյանի, այգեստանցիներ՝ Վահան Խռանյանի եւ Պողոս Թութունջյանի («Քոթոթ» մականվամբ) ուղեկցությամբ, որոնք քաջ եւ կոփված կռվողներ էին եւ դեմ էին կուսակցության պարտադրած այդ առաքելությանն ու զիջումների քաղաքականությանը, որոշում է մեկնել Շատախ։*

Սկզբից եւեթ նշենք, որ Իշխանի Շատախ մեկնելու որոշումն արդեն իսկ սխալ էր։ Ժամանակի հայ հասարակական-քաղաքական ընդդիմադիր շրջանները, որոնք հիասթափված էին Իշխանի եւ Ա. Վռամյանի վարած «խոհեմութեան» *քաղաքականությունից, անընդունելի էին համարում Իշխանի կարճամտությունը, քանի որ նրանք առանց երկմտելու* «կը մեկնեն միտքերը հանդարտեցնելու եւ կռիւն ընդհատելու...» *եւ* «...թոան ձիուն կոնակը եւ յեղափոխական Շատախի կրակը մարելու գացին...»[12]։

Մ. Ավետյանը կարծում է, որ «...յեղափոխութեան պատասխանատու ղեկավարը՝ փոխանակ ինքը ստանձնելու հայկական գոյամարտը, զայն մարելու կ'երթար Շատախ, ուր հայ ժողովուրդը իր գոյութեան պայքարը կը մղէր»[13]։ *ՀՅԴ ղեկավարությունը եւ անձամբ Իշխանը եւս քաջ գիտակցում էին, որ իրենց քայլը հայկական պատվիրակությանն ստույգ առաջնորդում էր*

---

[11] *ՀԱԱ, ֆ.450, ց.1, գ.45, թ.44։*

[12] Ե. ԱԻ. ՔՀՆՅ. ԳԵՂԱՄԵԱՆ, *Հայերի ազատագրական շարժումները XX դարում կամ Հայկական հարցի եօթներորդ շրջանը (մասն երկրորդ), XX դ., Բագու, 1917, էջ 614, 616։*

[13] Մ. ԱՎԵՏԵԱՆ, *Հայ ազատագրական ազգային հիսնամեայ (1870–1920) յուշամատեան եւ զոր. Անդրանիկ. վերլուծական հայեցողութեամբ եւ վաւերական տուեալներով, Փարիզ, 1954, էջ 143։*

մահվան, բայց եւ այնպես «անոնք տակաւին հաստատ կը մնային Ճեւտէթի կամայականութիւնները գոհացնելու իրենց ուղիին վրայ...»[14]։

Իշխանի Շատախ մեկնելու պատրաստակամությունը քննադատության են ենթարկել հենց դաշնակցական գործիչները։ Հ. Կոսոյանը, խոսելով այդ որոշման մասին, գրում է. «Իշխանի յանկարծական մեկնումը չսպասուած անակնկալ մըն էր թէ՛ ժողովրդի եւ թէ՛ բոլոր երիտասարդութեան համար՝ այսպիսի մէկ տագնապալի ոպէին։ Ինչ ալ որ լինի մեծ սխալ մըն էր Իշխանի Շատախ ղրկուիլը, այս էր ամբողջ ժողովրդեան կարծիքը, որ Իշխանի անձնաւորութեան եւ ներկայութեան մէջ վստահորեն ցեղին կորովի, ոգորումի եւ յաղթանակի ոյժը կը տեսնէր խտացած»[15]։

Իշխանի երեք թիկնապահները եւս գիտակցում էին Թ. Ջեւդեթի խաբեությունը եւ հասկանում էին, որ իրենք կամավոր զոհաբերության էին մեկնում միայն եւ միայն այն բանի համար, որ իրենց պարտքը կատարեն կուսակցության առջեւ։ Մեկնելու սխալականությունն է փաստում հատկապես Վահան Խռանյանն, որ մահից առաջ իր կուսակից ընկերներին պատգամում է. «Այս անգամ ալ մեզի խաբեցին։ Մենք կերթանք մեռնելու իզո՛ւր տեղ, բայց դուք այլեւս չխաբուիք»[16]։

Ինչպես տեսնում ենք, շարքային դաշնակցականների պատկերացումներն ավելի իրատեսական էին։ Նրանք ավելի խորն էին ըմբռնում թուրքական կառավարության ու Վանի կուսակալ Ջեւդեթի նենգ քաղաքականության էությունը, քան թե իրենց ղեկավարները։

Որպես խաղաղարար խառն հանձնաժողովի անդամ երեք ոստիկանների ուղեկցությամբ Իշխանի հետ Շատախ է մեկնում նաեւ Վանի ոստիկանապետ Վեֆիկ բեյը[17], որն իր զբաղեցրած դիրքի համեմատ «ավելի մարդկային էր, վստահելի, ինչ որ իրենից կախված լիներ, չէր խնայի»[18]։

Նախապես որոշվել էր, որ հանձնախումբը գիշերելու էր հայկական Կարմիրքար (Կիզիլդաշ) գյուղում[19], բայց ոստիկանապետի պնդմամբ հաշտարար հանձնաժողովի անդամները՝ «խաղաղութեան առաքելնե-

---

[14] Վ. Թաշճեան, *Իշխանը. Վանա Իշխանի կեանքն ու գործունեութիւնը, Երեւան, 1994, էջ 181։*

[15] Հ. Կոսոյեան, *նշ. աշխ., էջ 27։*

[16] Ա.-Դօ, *նշ. աշխ., էջ 155, նաեւ՝* Օ. Մխիթարեան, *նշ. աշխ., էջ 40, նաեւ՝* Հ. Ա.Ի. Քէնց. Հաճեան, *Հայոց տաժանքի ճամբաներով, հտ. Ա., Թեհրան, 1965, էջ 376։*

[17] *Տե՛ս* Ա.-Դօ, *նշ. աշխ., էջ 155։*

[18] Կ. Սուլախյան, *Թեժ մարտերը Վանի Քաղաքամիջում, Երեւան, 2000, էջ 13։*

[19] *Տե՛ս* Оборона Вана, 7 апреля – 4 мая 1915 г., М., 1917, *էջ 23։*

ը», ապրիլի 3-ի երեկոյան կանգ են առնում Շատախի կես ճանապարհին, Հայոց ձոր գետի հարթավայրում՝ Հայոց ձոր գավառի Հիրճ գյուղում, որն ուներ 30 տուն հայ եւ 40 տուն քուրդ խառը բնակչություն[20]։ Իշխանն անձամբ է որոշում գիշերել Հիրճում, քանի որ նա այդ գյուղի տասնորդի տուրքը վերցրել էր կապալով եւ հաճախ էր լինում այնտեղ, եւ որ Հիրճում էր ապրում իր «բարեկամ» տեղացի քուրդ մեծահարուստ Քեարիմ օղլի Ռաշիդը։ Մինչ Իշխանը եւ նրա ընկերները «հյուրընկալ» քրդին չվիրավորելու համար զենքերը վայր էին դրել եւ վայելում էին Ռաշիդ աղայի ու ոստիկանապետի հյուրասիրությունը[21], անակնկալ հյուրասենյակ են մտնում Ջեւդեթի հրամանով Վանից ուղարկված 12 զինված չերքեզների աւազակախումբը, որոնք տեղն ու տեղը գնդակահարում են Իշխանին ու նրա երեք զինակիցներին։ Ապա սպանվածներին կողոպտելուց, զենքերն ու ձիերը բռնագրավելուց հետո, դիակները հոշոտում են ու նետում գյուղի հորերից մեկը[22]։ Այդ դեպքի մասին 1905 թ. Վանի Հայոց ձորի Կեմ գյուղում ծնված ականատես Սիրակ Մանասյանը վկայում է. «...լուր հասավ, որ հասարակական-քաղաքական գործիչ պարոն Իշխանին մեր հարեւան Հիրճ գյուղում սպանել են։ Այդ այն ժամանակն էր, երբ թուրքերը Ջեւդեթ փաշայի միջոցով մեր մեծերին կանչում եւ գլուխներն ուտում էին։ Այդ աճուելի օրերին պր. Իշխանին հանկարծակի սպանում են եւ գցում են հորը։ Զբաղարարվելով դրանով, նրա երկու երեխաներին եւս ողջ-ողջ գցում են հորը։ Մենք, որ այդ լսեցինք, հայրենակիցներով իրար անցանք։ Մենք սկսեցինք պատրաստվել թուրքերի հարձակմանը»[23]։

Այդ մասին է վկայակոչում նաեւ Էրզրումի կայզերական հյուպատոս Շոյբների՝ Կ. Պոլսի Գերմանիայի դեսպանատուն ուղարկած 1915 թ. ապրիլի 26-ի հեռագիրը, որտեղ նշվում է, որ «Վանից հենց նոր ստացված ապրիլի 19-ի (նոր տոմարով - Ա. Հ.) մասնավոր լուրերը վկայում են այն մա-

---

[20] *Տես* Օ. Մխիթարեան, *նշ. աշխ., էջ 42։*

[21] *Փ. Թերլեմեզյանը վկայում է, որ Ռաշիդ աղայի տանը թուրքերը թոնրատանն էին հյուրընկալվել, իսկ հայերը՝ մառանում։ «Փոլիս կոմիսերը» իր զենքերը եւ հագուստները հանած մի քանի անգամ մտնում է հայ տղաների մոտ՝ ասելու, որ իրենք արդեն զենքերից ազատված ուտում ու հանգստանում են եւ խորհուրդ է տալիս, որ նրանք էլ ուտեն ու հանգստանան՝ ավելացնելով. «Շուտ պառկեք, որ շուտ ելնեք»։ Տես* Փ. Թերլեմեզեան, *Կյանքիս հուշերը, Երեւան, 2017, էջ 331։*

[22] *Ըստ Հանոի Պարպիի դիակները նետել են Վանա լիճը։ Տես* Հ. Պարպի, *նշ. աշխ., էջ 81։*

[23] Վ. Սվաջյան, *Հայոց ցեղասպանություն. ականատես վերապրողների վկայություններ, Երեւան, 2011, էջ 101, նաեւ նույնի՝ Հայոց ցեղասպանությունը եւ պատմական հիշողությունը, Երեւան, 2003, էջ 42–43։*

սին, որ մինչեւ խռովության բռնկվելը կառավարությունը ձերբակալել էր հայ երեւելիներին, որոնցից հայ երեւելի Իշխանը եւ երեք այլ հայեր ոստիկանական հսկողության ներքո տեղափոխելիս մորթվել են»[24]։

Ենթադրելի է, որ Իշխանի սպանության հարցում Թ. Ջեւդեթը ոչ ոքի չէր վստահել եւ որոշումը կայացրել էր մենակ։ Այդ մասին է փաստում ոստիկանապետ Վեֆիկ բեյի կնոջ հետ կապված մի վկայություն, որ պահպանվել է Կալիպսե Սոլախյանի հուշերում. «Մի քանի ժամից տեղ է հասնում ոստիկանապետը *(խոսքը՝ Վեֆիկ բեյի մասին է.*— Ա. Հ.*)*՝ ուղեկցող ոստիկաններով, շվարած ետ դառնում դեպքի վայրից։ Ասում են ոստիկանապետը անտեղյակ է եղել այդ դավադրությանը։ Այդ լուրը հաջորդ օրը՝ ապրիլի 4-ին մեզ հայտնեց Հայկավանքի մեր տանն ապրող զինվորականի կինը, երբ մայրս գնացել էր տան վարձը ստանալու։ ...27-ամյա թրքուհին, որ երկու անչափահաս երեխաների մայր էր, մտերիմ էր Վեֆիկ բեյի կնոջ հետ... Մեր տնվորի պատմելով, Վեֆիկի կինը ասել է. «Վեֆիկ բեյը այդ դավադրությունից (Իշխանի դեմ) տեղեկություն չի ունեցել, գնացել է ի պաշտոնե եւ հանդիպել է արդեն սպանված ճանապարհակիցներին (՞)»։ Դա խայտառակություն է, ասել է զինվորականի կինը, մեծ մարդն այդպես նենգաբար տված խոսքը չպետք է դրժեր, խաբեությամբ է ուզում փաշայության տիտղոս ձեռք բերել *(խոսքը՝ Թ. Ջեւդեթի մասին է.*— Ա. Հ.*)*»[25]։

Հաջորդ օրը Հովսեփ Խլղաթյանը կատարված ոճրագործության մանրամասները փոխանցում է դաշնակցության Վասպուրականի կենտրոնական կոմիտեի անդամներին[26]։ *Նամակում մասնավորապես նշում է, որ* «Իշխանն իր երեք ընկերներով հասած է Հիրճ գիւղը, ուրբաթ օրը, ուշ գիշերին եւ նախ ընտրուած է իջեւանիլ իր վաղեմի բարեկամ Քեարիմ օղլի Ռաշիդի տունը։ Մինչ Իշխանն ու ընկերները զէնքերը վար դրած վայելած են Ռաշիդի ու ոստիկանապետի կեղծաւոր հիւրասիրութիւնը, քաղաքէն, Ջէվդէթի յատուկ կարգադրութեամբ, ճամբայ ելած եւ Իշխանն ու ընկերները դաւադրուէն սպանելու տմարդի պաշտօնն ստանձնող 12 զինուած չէթաները՝ վրայ կը հասնին եւ սենեակը մտնելով յանկարծական կրակի կը բռնեն եւ տեղն ու տեղը կանշնչացնեն Իշխանն ու երեք ընկերները։ Իշխան հազիւ ժամանակ կունե-

---

[24] *Գերմանիան եւ Հայաստանը 1914–1918. դիվանագիտական փաստաթղթերի ժողովածու, հրատարակությունը եւ ներածությունը՝ դոկտոր Յոհաննես Լեփսիուսի, թարգմանությունը գերմաներենից՝ Վալենտինա Մինասյանի, հտ. I, Երեւան, 2006, էջ 153։*

[25] Կ. Սուլախյան, *նշ. աշխ., էջ 14։*

[26] *ՏԵՍ ՀԱԱ, ֆ. 450, ց. 1, գ. 45, թ. 54։*

նայ ձեռքը ատրճանակին տանելու... Ջորս ընկերներն ալ կը նահատակուին միեւնոյն վայրկեանին... Իշխանի եւ երեք ընկերներու դիակները կողոպտելէ, զէնքերը խլելէ եւ ձիերը գրաւելէ ետքը, մարմինները յօշոտած են եւ ձգած նոյն գիւղի հորերէն մէկուն մէջ»[27]։

Հ. Խլղաթյանի նամակը կասկածանքի տեղիք չէր թողնում, որ Իշխանն ու նրա ընկերներն իրոք սպանվել էին, եւ որ Թ. Ջեւդեթը Իշխանին վերացնելուց հետո մեծ ուժեր է կենտրոնացնում Վանի հայությանը 24 ժամվա ընթացքում սրի քաշելու համար։ Այդ է հաստատում նաեւ Ա-Դոն, երբ գնահատելով իր բնույթով արեւելյան այդ անօրինակ դավադրությունը նշում է. «Դրանով սկիզբն է դրւում Ջէյդէտի արիւնոտ ծրագրին, դրանով սկսւում է անօրինակ ոճիների շարքը, որոնք գալիս են կազմելու հայ ժողովրդի տարեգրութեան սոսկալի էջը»[28]։

Սակայն Հ. Խլղաթյանին լսող չկար, քանի որ դաշնակցական ղեկավարները դեռեւս հույսեր էին կապում ոճրագործ Թ. Ջեւդեթի հետ, որն իր նենգ թակարդով նպատակ ուներ վերջնականապես խորտակել վանեցու դիմադրական ոգին։ Սակայն, ինչպես «Ճակատամարտ» պարբերականն է պատասխանում «յաջողեցաւ թակարդը, բայց չիրականացաւ նպատակը...»[29]։

Իշխանի եղեռնական սպանությունը խորապես ցնցեց Վասպուրականի ողջ հայությանը։ Սպանությունից մեծապես ազդված Հ. Մանուկյանն շտապում է գրել, որ «...այնքան անակնկալօրէն ու այնքան վայրկենական կատարուած Իշխանի եղեռնական մահը, ստեղծեց պահանջուած մօմենտը։ Ամենքը, յեղափոխականն ու պահպանողականը, ծերն ու երիտասարդը, կուսակցականն ու չէզոքը, կինն ու երախան, բոլորը, բոլորը մէկ վայրկեանի մէջ, հոգեբանական զսպանակի մը ուժով զգացին, որ զէն ի ձեռին պաշտպանուելէ զատ, չկայ ուրիշ միջոց։ Կեանքի ճամբաները գոցուեցան, եւ մէկ ճամբայ միայն մնաց. բոլորը եկան ու կանգնեցան այդ փրկարար ճամբուն վրայ։ Ժողովներու, ճառերու, քուէներու պէտք չեղաւ. այդ համոզումը գոյացաւ մէկ վայրկեանի մէջ, տարերային թափով ու բնազդական մղումով մը։ Իշխանի մահը եղաւ շաղկապող, զօդող օղակը հասարակական բոլոր ուժերու, հանրային բոլոր կարողութիւններու, անիկա *accumulateur* մը եղաւ եւ մեր դիմադրական ուժի բոլոր ակերը բացաւ մէկ կէտի վրայ։ Իշխանի մահը եղաւ երկաթեայ այն հա-

---

[27] Օ. Մխիթարեան, *նշ. աշխ., էջ 42–43։*

[28] Ա-Դ0, *նշ. աշխ., էջ 156։*

[29] *«Ճակատամարտ», Կ. Պոլիս, 1921 թ. ապրիլի 24, թիւ 740–2561։*

ռուածը, որ դարբնեց բոլոր կարողութիւնները եւ անոնցմէ ստեղծեց կամք մը հզօր ու ապառաժեայ՝ Յեղին գոյութիւնը պահելու եւ յաղթանակելու անյողդողդ որոշումով մը։ Մոռացութեան արուեցան բոլոր մանր հողերը, կորան պզտիկութիւնները, մասնաւորը տեղի տուաւ ընդհանուրին, անհատականը հանրականին։ Լիումն ու յուսահատութիւնը չֆացան եւ բաջութեան Աստուածը թափահարեց իր թեւերը Վասպուրականի երիտասարդութեան վրայ»[30]։

Իսկ Տ. Թեոդիկը նկատում է, որ Իշխանի սպանությունն «առաջին արիւնն էր այս, որ կը թափուէր Վասպուրականի մէջ...»[31] *եւ այն էլ մի մարդու, որի նմանները քիչ են անգամ* «ազգերու հերոսացանկին մէջ»[32]։

Գ. ՀԻՐՃԻ ԿՈՏՈՐԱԾԸ

Ա.Վռամյանի ձերբակալությունը, աքսորը եւ սպանությունը։ Վանի ղեկավար գործիչների ոչնչացման ծրագրի առաջին մասն իրագործելուց հետո, Թ. Ջեւդեթն անցնում է ցեղասպանության քաղաքականության հաջորդ կետի գործադրմանը։ Ապրիլի 4-ին Հիրճում իշխանություններն այդ նույն «բարեկամ» *քրդի տանն են հավաքում գյուղի 46 հայ տղամարդկանց, բնաջնջում նրանց, ապա դիակները լցնում հորերը, իսկ կանանց կողոպտում, տանջում եւ գյուղից դուրս տանելով սպանում։ Միայն մեկին է հաջողվում ազատվել նախճիրից։ Այդ մասին Հովսեփ Խլղաթյանը հիշում է.* «Հիրճ գիւղի հայերէն միայն մէկը ազատած է։ Մնացեալները գիւղէն դուրս չեն կրնար գալ, բանտարկուած են եւ բնական է, որ պիտի կոտորուին։ ...Կը կարծեմ, որ հերթը մեզի հասած է... Նորդուզէն եւ Խոշաբէն հազարաւոր հեծեալ եւ հետեւակ զինուած քիւրդեր արդէն իսկ բռնած են Հայոց-Ձորի հայ գիւղերու բոլոր ճամբաները։ Քրդական գունդերու առաջնորդն է Գրաւցի Շաֆիր աղայի տղան Լէզգին։ Կը պատրաստուիմ դիմադրութեան, բայց թշնամու գերազանց ուժերու դէմ որեւէ յաջողութիւն անյուսալի է։ Ոչ միայն զէնքի եւ ռազմամթերքի, այլեւ կռուող ուժերու սուր կարիք ունինք... Մնաք բարով «Համբոյրներով՝ Յովսէփ Խլղաթեան» 4 ապրիլի, Հայոց ձոր, 1915»[33]։ *Միա-*

---

[30] Գ. Լաչեան, *Յեղափոխական դէմքեր (մտաւորականներ, հայդուկներ), Գահիրէ, 1945, էջ 387–388, նաեւ՝* Հ. Աճէմեան, *Սգապակ Իշխանի, Թիֆլիս, 1916, էջ 22։*

[31] Թէոդիկ, *Յուշարձան նահատակ մտաւորականութեան, Երեւան, 1985, էջ 72։*

[32] Հ. Երամեան, *Վան-Վասպուրական, «Հայրենիք ամսագիր», Բոստոն, 1925, թիւ 8, էջ 120։*

[33] Օ. Մխիթարեան, *նշ. աշխ, էջ 43, նաեւ՝* Ա. Վէր. Կէօրկիջեան, *Վան-Վասպուրականի հերոսամարտը. 1915 ապրիլի 7 – 1915 մայիսի 7, յոյս եւ լոյս, Պէյրութ, 1965, էջ 88։*

ժամանակ, նա լուր է ուղարկում Վան եւ հայտնում, որ Վանի հայերի կոտորածը նախատեսվում էր 1915 թ. ապրիլի 6-ին[34]*։*

Ապրիլի 4-ի գիշերը աննկարագրելի մի եռուզեռ էր Վանի Քաղաքամիջի պաշտոնատան մեջ, որտեղ Բիրհանեդդին բեյը մինչեւ լուսաբաց զբաղված էր զանազան կարգադրություններով։ «Վանա Իշխան»-ին սպանելուց եւ Փոլադ բեյի սուրհանդակների միջոցով սպանության լուրը ստանալուց հետո, Թ. Ջեւդեթը 1915 թ. ապրիլի 4-ին՝ շաբաթ օրը, առավոտյան ժամը 10-ին, դավադիր մտադրությամբ իր տուն՝ խորհրդակցության է հրավիրում Վանի հասարակական-քաղաքական ճանաչված դեմքերից՝ Ա. Վռամյանին, Արամին, Ա. Թերզիբաշյանին ու Գ. Ճիտեջյանին՝ «որպէս զի...իրենց կարծիքը առնեմ շատ կարեւոր խնդրի մը մասին»[35]*։*

Այս անգամ Ջեւդեթի բուն նպատակը Ա. Վռամյանին եւ Արամին ձերբակալելն էր, որպեսզի նրանք միմյանցից անտեղյակ ներկայանային ու ընկնեին իր ծուղակը։ Արամը բնակվում էր Վանի Արարք թաղամասում, իսկ Ա. Վռամյանը՝ Խաչ-փողոցում։ Այդ նպատակով Ջեւդեթը նրանց իր մոտ է հրավիրում՝ Ա. Վռամյանին Խաչ փողոցի, իսկ Արամին՝ Արարքի ոստիկանության միջոցով[36]*։ Դավադրությունը քողարկելու նպատակով Ջեւդեթը նրանց հետ իր մոտ է կանչում նաեւ Ա. Թերզիբաշյանին եւ Գ. Ճիտեջյանին։ Նահանգապետի ծանուցումը Ա. Վռամյանին է հանձնվում այն ժամանակ, երբ նա Եզնիկ եւ Դանիել վարդապետների հետ կառք նստած իջնում էր քաղաք՝ Արամի հետ կուսակալին հանդիպելու նպատակով*[37]*։*

Դանիել վարդապետի խորհրդով Ա. Վռամյանը Ջեւդեթի մոտ է մեկնում մենակ[38]*։ Նախքան կուսակալին հանդիպելը, նա իր մոտ եղած նամակները, փաստաթղթերը, հաշիվները եւ 30 օսմանյան ոսկին թողնում է դպրոցում՝ իր գրասեղանի գզրոցում։ Մեկնելուց առաջ նա մի երկտող է գրում Արամին հետեւյալ բովանդակությամբ.* «Արամ, կուսակալը ինձ կանչեց, ես գնում եմ, եթէ քեզ էլ կանչի, մի՛ գար։ Ես կերթամ կոր, դուն կե-

---

[34] *Տե՛ս* Մ. ԱՐՔ. ՕՐՄԱՆԵԱՆ, *Թիւրքահայ աղէտը. պատմական փաստաթուղթեր, Ա., Տեղեկագիր, էջ 19։*

[35] Հ. ՊԱՌՊԻ, *նշ. աշխ., էջ 81։*

[36] *Տե՛ս* Օ. ՄԽԻԹԱՐԵԱՆ, *նշ. աշխ., էջ 40։*

[37] *Տե՛ս* Հ. ԿՈՍՈՅԵԱՆ, *նշ. աշխ., էջ 28։*

[38] *Տե՛ս* Ճ. ԴԵՐԿՈՄՍ ՊՐԱՅՍ, *Անգղիական կառավարութեան կապոյտ գիրքը Հայկական Մեծ Եղեռնի մասին (1915–1916), Կ. Պոլիս, 1919, էջ 58։*

ցի՛ր»[39], «երբ դու էլ հրաւիրուես Ջեւդէթի մօտ, չգաս մինչեւ իմ վերադարձս»[40]։ *Այս ամենը վկայում էր, այն մասին, որ Ա. Վռամյանն ամբողջությամբ զգում էր սպառնացող վտանգը։ Հ. Կոսոյանն այն համոզմունքն է հայտնում, որ եթե անգամ Ա. Վռամյանն իմանար նաեւ Իշխանի սոսկալի մահը, որի մասին նա տեղյակ չէր, այնուամենայնիվ առանց վարանելու կգնար* «...մտրակելու համար Ջէվտէթի նամարդ գործը, պիտի աճապարէր ցասում կտրած՝ խարանելու համար ժողովրդի դահճապետի ճակատը»[41]։

Ա. Վռամյանը կառքով մեկնում է նահանգապետարան, որտեղ նա դավադրաբար ձերբակալվում է ու այլեւս հետ չի վերադառնում։ Նրան տեղեկացվում է օսմանյան կենտրոնական կառավարության պահանջը՝ անհապաղ Կ. Պոլիս տեղափոխելու մասին։ Ա. Վռամյանը բողոքարկում է որոշումը եւ մատնացույց անում պատգամավորական իր անձեռնմխելիությունը, որը սակայն «քաղաքավար կերպով վար կը դրուի»[42]։ *Դեպքերի անմիջական ականատես Միհրան Ղազարյանը փորձում է բացատրել, որ Ա. Վռամյանը հավատալով իրեն* «եղբայրացած» *էնվերի երդմանն ու հեռագրին, ինչպես նաեւ ցանկանալով Վանի նահանգը զերծ պահել արյունահեղություններից, նախընտրել էր մեկնել Կ. Պոլիս*[43]։

Թ. Ջեւդեթի հրամանով Ա. Վռամյանն ապրիլի 5-ին 50 ոստիկանի ուղեկցությամբ Վանի Ավանց նավահանգստից՝ նավով տեղափոխվում է Դատվան, իսկ այնտեղից էլ Բաղեշ-Դիարբեքիր։ Ա. Վռամյանին ազատ արձակելու հարցը քննարկվում է 1915 թ. ապրիլի 6/19-ին Գ. Սպորդոնիի եւ Թ. Ջեւդեթի հանդիպման ժամանակ։ Սակայն կուսակալը պատճառաբանում է, որ «հայցը եւ հրահանգը Պոլսից է»[44]։

Ըստ գերմանական դիվանագիտական փաստաթղթերի եւ մասնավորապես Գերմանիայի արտգործնախարար Յիմերմանի 1915 թ. հունիսի 28-ի հաղորդագրության, նախապես որոշված էր Ա. Վռամյանին՝ որպես օսմանյան խորհրդարանի պատգամավոր տեղափոխել Կ. Պոլիս՝ այնտեղ մահապատժի ենթարկելու համար։ Նրան փրկելու ակնկալիքով

---

[39] Թէոդիկ, *Յուշարձան նահատակ մտաւորականութեան, Երեւան, 1985, էջ 72։*

[40] Հ. ԱԻ. ՔՀՆՅ. ՀԱՃԵԱՆ, *նշ. աշխ., էջ 376։*

[41] Հ. ԿՈՍՈՅԵԱՆ, *նշ. աշխ., էջ 28։*

[42] ՀԵՐՈՍԱՊԱՏՈՒՄ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ, *Պէյրութ, 1978, էջ 54։*

[43] *Տե՛ս* Ի. ԱՎԱԳՅԱՆ, *1915 թ. բիթլիսյան ողբերգություն. Միհրան Ղազարյանի հուշապատումը, Գյումրի, 2008, էջ 10–11։*

[44] *1915-ի ինքնապաշտպանական կռիւները, Նոր Ջուղա, 2015, էջ 9։*

Յ. Լեփսիուսը դիմում է Գերմանիայի արտգործնախարար Յիմերմանին, իսկ վերջինս էլ Կ. Պոլսի գերմանական դեսպան Հ. ֆոն Վանգենհայմին[45]։ Իր հերթին օսմանյան պետական պաշտոնյա Միհրան Պոյաճյանը, որը Ն. Հոֆի հետ այդ ժամանակ գտնվում էր Բիթլիսում, Ա. Վռամյանին ազատ արձակելու համար դիմում է նահանգապետ Մուսթաֆա Աբդուլ-հալիք Ռենդային։ Սակայն վերջինս պատասխանում է, որ «հիմա վրէժի ժամանակն է»[46]։

Պատմագրության մեջ առ այսօր հստակեցված չեն Ա. Վռամյանի սպանության մանրամասները։ Ըստ Մ. արք. Օրմանյանի վկայության՝ Ա. Վռամյանը Բիթլիսում Բոհտանսու (Ջերմ, կամ Արեւելյան Տիգրիս) գետի կամրջի վրա չարչարանքների ենթարկվելուց հետո սպանվել է, իսկ դիակն էլ նետվել է գետը (ըստ Հ. Պարպիի՝ Վանա լիճը)[47]։ Ըստ բերդաշենցի ականատես-վերապրող Մանվել Մարությանի վկայության նավավարները ծանր երկաթ են կապել Ա. Վռամյանի վզից եւ նրան խեղդամահ արել Վանա ծովում[48]։ Արժանահավատ մեկ այլ տեղեկության համաձայն Ա. Վռամյանին սպանել էին հունիսի 22-ին՝ Բիթլիս-Դիարբեքիր ճանապարհին[49]։ Արժեքավոր տեղեկություն է հաղորդում նաեւ Բիթլիս նահանգի Խլաթ գավառի Շամիրամ գյուղի բնակիչ՝ Հովակիմ Շահբազյանն իր՝ «Դատվան» անտիպ աշխատության մեջ (էջ 100–101)։ Նա հիշում է, որ «մարտի վերջին Դատվան գյուղի քահանա տեր Արմենակը, որը հայ ազատագրական շարժման կողմնակից եւ ակտիվ մասնակից էր, գիշերը սուրհանդակ էր ուղարկել եւ հայտնել, որ Վանում Ջեւդեթ փաշան Վռամյանին կանչել էր խորհրդակցելու համար եւ բանտարկել էր ու մոտորնի նավակով ուղարկել ուշ երեկոյան ժամանակ։ Ես նրան տեսա. 20-ից ավելի պահակախմբի հսկողությամբ նրան տարան կոտուն։ Երեկոյան ստույգ իմացանք, որ նա կմնա այստեղ մինչեւ Բիթլիսից զորք կուղարկեն ապահով տեղափոխելու հա-

---

[45] *Տե՛ս Գերմանիան եւ Հայաստանը 1914–1918. դիվանագիտական փաստաթղթերի ժողովածու, հրատարակությունը եւ ներածությունը՝ դոկտոր Յոհաննես Լեփսիուսի, թարգմանությունը գերմաներենից՝ Վալենտինա Մինալյանի, հատոր I, էջ 207։*

[46] ՁԱՒԷՆ ԱՐՔ., *Պատրիարքական յուշերս. վաւերագիրներ եւ վկայութիւններ, Գահիրէ, 1947, էջ 92։*

[47] *Տե՛ս* Մ. ԱՐՔ. ՕՐՄԱՆՅԱՆ, *նշ. աշխ., էջ 19։*

[48] *Տե՛ս* Վ. ՍՎԱՋԼՅԱՆ, *նշ. աշխ., էջ 133։*

[49] *Տե՛ս* Оборона Вана, 7 апреля – 4 мая 1915 г., *էջ 26, նաեւ Տրապիզոնի թեմին վիճակաւոր Յովհաննէս արք. Նազլեանի յուշերը Մերձաւոր Արեւելքի 1914–1928 շրջանի քաղաքական-կրոնական դէպքերուն մասին, հտ. Ա., թարգմ.՝ Հմայեակ Ստեփանեանի, Պէյրութ–Լիբանան, 1960, էջ 163։*

մար։ Նույն օրը կես մետրից ավել ձյուն էր եկել եւ Բիթլիսից եկող զորը, շուրջ 500 հոգի, ճանապարհ բանալով գնում էր Դատվան։ Մենք Սողոյի (խմբապետ Սողոն հուշագրի հորեղբոր որդին էր, որը եղել էր ՀՅԴ նշանավոր գործիչ՝ Աշոտ Երկաթի զինակիցը, իսկ ավելի ուշ՝ Արամ Մանուկյանի թիկնապահը) գլխավորությամբ, 15 հոգի՝ զինված զանազան տեսակի զենքերով, մոտեցել էինք ճանապարհին եւ սպասում էինք առիթի Վռամյանին ազատելու համար։ Բայց Բիթլիսից եկող զորի մի մասը սպասեց Կարմրդրեր կոչվող բարձունքի մոտ եւ հսկում էր շրջապատը։ Նրանք ենթադրել էին, որ մենք շատ ուժ կունենանք եւ կովով կազատենք նրան։ Ցերեկվա ժամը 11-ին մոտ Դատվանի կողմից զորը հետ վերադարձավ, եկավ Կարմրդրերով անցավ։ Նրանց անցնելուց հետո այնտեղ դիրք բռնած զորը նրանց հետեւից նույնպես գնաց դեպի Բիթլիս։ Մինչեւ մութն ընկնելը մենք մնացինք անշարժ մեր տեղում, գիշերը վերադարձանք գյուղ։ Գյուղը չէր քնել եւ սպասում էր մեր վերադարձին։ Գյուղի ժողովուրդը մինչ այդ էլ զգում էր իր օրհասական վիճակը, այս օրվանից նա համոզվեց, որ արդեն փրկություն չկա իրեն… Վռամյանին տարան Բիթլիս եւ սկզբնական շրջանում նրա վիճակից ոչ ոք տեղեկություն չուներ։ Հետո իմացանք, որ նրան Բիթլիսից դեպի Սղերդ տանող ճանապարհին, Ծակքար կոչվող վայրում կապել են ծառից եւ թնդանոթով խփել են։ Սա ինձ պատմել է Բիթլիսի շրջանի Ջլկան գյուղից Նշան Ասատրյանը»[50]։

Վանի Առաջնորդական փոխանորդ Եզնիկ վրդ. Ներկարարյանը Իշխանի եւ Ա. Վռամյանի սպանության մասին հիշում է. «Գնացի կուսակալութեան պաշտօնատունը։ Վանի թիւրք երեսփոխան Միւնիբ էֆենդին ներսն էր. սպասեցի սպասման սրահի մէջ, մինչեւ դուրս եկաւ, ես ներս մտայ կուսակալին մօտ։ Ջեւտէթը այլայլուած եւ շատ զայրագին դէմք ունէր եւ բոլորովին մենակ էր։

Հարցուցի. Լսեր եմ, որ Դում Վռամենին ձերբակալել էք։

Ըսաւ. Այո՛, ճիշտ է։

Ըսի. Լսել եմ, որ Դում ղրկել էք Իշխանին իր ընկերներով եւ սպանել տուել էք։

Ըսաւ. Ճի՛շտ է, որովհետեւ Իշխանը, եթէ երթար Շատախ, փոխանակ խաղաղացնելու, պիտի աշխատէր հրահրել խառնակութիւնը, որովհետեւ եթէ այստեղի կոմիտէի հրահանգը չլիներ Շատախի ժողովուրդը Յովսէփի մը պատ-

---

[50] Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ, *Հովակիմ Շահբազյանի «Դատվան» անտիպ հուշագրությունը, «Հայագիտության հարցեր» հանդես, 2015 թ. թիվ 3 (6), էջ 58։*

ճառով յարձակում չպիտի գործէին կառավարութեան վրայ եւ ոստիկաններ չպիտի սպանէին: Այս պատճառով ղրկեցի եւ Իշխանը սպաննել տուի: Մինչեւ անգամ հրամայեցի, որ եթէ կարելի չլինի փօլիս միւտիրը անջատել, զայն ալ սպաննեն միասին:

Կուսակալի այս խօսքերէն սաստիկ զգացուեցայ եւ առանց ինձ հաշիւ տալու ըսի՝ Կառավարութեան մը մեծ ամօթանք է, որ մարդու դաւադրութեամբ սպաննել տայ: Դուք ղրկեցիք Իշխանը, եւ Դուք սպաննել տուիք:

Ըսաւ. Ո՛չ, ես չեմ ղրկած Իշխանը, ինքը գնաց: Երբ կերթար, ինձ ըսաւ, թէ՝ «Հազիր կերթամ, մի քանի արջ ալ կը զարնեմ»: Ես կռահեցի, որ փոխանակ արջի՝ քիւրտ պիտի սպաննէ:

Յետոյ սաստիկ կատաղած՝ աթոռին մէջ ցնցուեց եւ գոռաց.

– Թիւրեր իմ օ դէվլէթին նամուսուն ու հէսիյէթին իզինէ, քի բիզ չիմդիյէ կադար դյորթ «տղայա» եսիր օլմիչզ (թքել եմ այն կառավարութեան պատուի ու նամուսի վրայ, որ մենք մինչեւ հիմա չորս տղայի գերի եղած ենք): Մենք ձեզմէ՛ կուզենք տասը հազար փախստական, իսկ դուք, մեզ խաղցնելով, կուտաք 70–80 հոգի: Բիլմիյորում, բունդան սոնրա բու մեմլեքեթին իշինդ յա էրմենիլիք գալաջաք, յա իսլամլըք (Զգիտեմ, սրանից յետոյ այս պետութեան մէջ կա՛մ հայութիւնը պիտի մնայ, կա՛մ իսլամութիւնը): Վաղուընէ սկսեալ թնդանօթներ քաշել պիտի տամ, որոնք որ յանձնուին, կը ներուին, իսկ չյանձնուողները տափսալղաղ պիտի ընեմ:

Ես ըսի, ափսոս, հազա՛ր ափսոս, կը ցաւիմ, որ կուսակալի մը բերնէն այսպիսի խօսքեր կը լսեմ: Մանաւանդ, որ Դուք հիմա դրացի պետութեան հետ պատերազմի մէջ էք: Վեց հարիւր տարի է, որ հայ ազգը օսմանեան պետութեան հաւատարիմ ընթացքի մէջ կը գտնուի:

– Զէմ գիտեր,– ըսաւ,– կա՛մ հայութիւն պիտի մնայ այս երկրին մէջ, կա՛մ իսլամութիւն»[51]:

Այն, որ Իշխանի, Ա. Վռամյանի եւ Վանի բազմահազար հայերի նահատակության հրամանը տվել էր Թ. Ջեւդեթը, վկայում է ականատես – պաշտոնյա Մ. Էպլիղաթյանը, որը նշում է. «...այս մեծ ոճրագործը, քաղաքավար երիտասարդ ալպանացի մըն էր, խրոխտ եւ քաջ ապահովաբար... միեւնոյն ատեն հլու հնազանդ գործադրողն եղած էր իր պետերու հրահանգներուն»[52]:

---

[51] *ՀԱԱ, ֆ. 227, ց. 1, գ. 453, թ. 4–5:*

[52] Մ. ԷՊԼԻՂԱԹԵԱՆ, *Կեանք մը ազգիս կեանքին մէջ. ականատեսի եւ մասնակցողի վկայութիւններ 1903–1923, Անթիլիաս, 1987, էջ 127:*

Գ. Պալաքյանը խոսելով Իշխանի եւ Ա. Վռամյանի սպանությունների մասին գրում է. «...Վանի կուսակալ Ճէվտէթ հայերու մէջ տակաւ խմորուող անձնապաշտպանութեան ոգին խեղդելու, եւ կենդրոնէն հրամայուած հայաջինջ ծրագիրը դիւրաւ գործադրել կարենալու համար, ըստ թրքական աւանդական սովորութեան, դաւադրութեամբ յանկարծ ձերբակալել կու տար Վանի մէջ Վռամեանը։ Իսկ դիտումնաւոր կերպով Վանէն իբր թէ քննութեան եւ հանդարտեցնելու համար շրջակայ հայ գիւղերը ղրկուած դաշնակցական յայտնի գործիչ Իշխանը, նոյնպէս նենգամտութեամբ գիշերով սպանել տալով ուղեկից ոստիկանապետին ու ոստիկան զինուորներուն ձեռամբ, կամայ ակամայ Վանի հայ ժողովուրդը ինքնին կը մղէր փոխադարձ անձնապաշտպանութեան արագ միջոցներու, կանխելու համար իթթիհատական կառավարութեան նենգամիտ հայաջինջ դաւադրութիւնը»[53]։

Այն, որ Իշխանը եւ Ա. Վռամյանը զոհ են գնում Թ. Ջեւդեթի կազմակերպած դավադրությանը, դիտելի է նույնիսկ գերմանական ու թուրքական վկայություններից։ Այսպես, գերմանացի քահանա Շտիրը նշում է, որ «ապրիլի 15-ին այնտեղ *(խոսքը՝ Վանի մասին է.–* Ա. Հ.*)* ուղեւորության ժամանակ սպանվեցին երկու հայ առաջնորդներ, որը նրանք ձեռնարկել էին վալիի կարգադրությամբ՝ թուրք ոստիկանների ուղեկցությամբ»[54]։

Այդ է հաստատում նաեւ Մ. Թալեաթը, որը խոսելով դաշնակցական գործիչների սպանության մասին մատնանշում է, որ «...Դաշնակցութեան հրամանով եւ կուսակալ Ճէւտէթ պէյի արտօնութեամբ՝ Վանէն երկու ընկերներով ճամբայ հանուած պարագլուխ «Իշխանը» ճամբան սպանուած եւ երեսփոխան Վռամեանն ալ անհետացուած է։ Թէեւ Ա. Մանուկեանն ալ մէջտեղէն վերցնել ուզուած է, սակայն Մանուկեան, աւելի ճարպիկ գտնուելով, ապստամբած եւ կուսակալ ճէւտէթը փախուստի մատնելով»[55]։

1915 թ. նոյեմբերի 15-ին Օսմանյան Թուրքիայի վարչապետ Սայիդ Հալիմը, անդրադարձ կատարելով օսմանյան խորհրդարանում հայ պատգամավորների բացակայության խնդրին, նշում էր, որ Վանի պատգա-

---

[53] Գ. Ծ. ՎՐԴ. ՊԱԼԱՔԵԱՆ, *Հայ գողգոթան. դրուագներ հայ մարտիրոսագրութենէն. Պեռլինէն դեպի Զոր, 1914–1920, հտ. Ա., Վիեննա, 1922, էջ 61։*

[54] *Հայերի ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում (1915–1918 թթ.). օտարերկրյա պետությունների դիվանագիտական փաստաթղթերի վկայությունները, փաստաթղթերի ժողովածու, կազմող, առաջաբանի հեղինակ՝ պատմական գիտությունների դոկտոր Լավրենտի Բարսեղյան, երկրորդ հատոր, Երեւան, 2011, էջ 161։*

[55] Մ. ՐԻՖԱԹ, *Օսմանեան յեղափոխութեան մութ ծալքերը եւ իթթիհատի հայաջինջ ծրագիրները, Երեւան, 1990, էջ 93։*

մավոր Վռամյան (Արշակ) էֆենդին Վանի ապստամբության ժամանակ Բիթլիսի մոտ սպանվել է[56]*։*

*Ա. Վռամյանի սպանության հարցը քննարկման առարկա է դարձել նաեւ օսմանյան խորհրդարանի հետպատերազմական շրջանի հայ պատգամավորների մեղադրական ելույթներում։ Սվազի երեսփոխան՝ Տիգրան Պարսամյանը օսմանյան խորհրդարանի 1918 թ. նոյեմբերի 18-ի նիստում հակաճառելով Մուշի թուրք երեսփոխան Իլյաս Սամիի՝ Վանի հայերի դեմ ուղղված մեղադրական հայտարարություններին, ոգեկոչում եւ պաշտպանում է Ա. Վռամյանի «*շինարար եւ ազգանուէր գործունէութիւնը»[57]*։*

Օսմանյան խորհրդարանի հայազգի պատգամավորների, այդ թվում նաեւ՝ Ա. Վռամյանի սպանության հարցը քննարկման առարկա դարձավ նաեւ բրիտանական զինվորական դատարանում՝ Բեհբութ խան Ջիվանշիրին սպանած Միսաք Թորլաքյանի դատավարության ժամանակ։ Ե. Օտյանին ուղղված փաստաբան Հ. Խոսրովյանի այն հարցին, թե օսմանյան խորհրդարանն իր հայազգի անդամների սպանության կապակցությամբ ցավակցություն հայտնել են, թե ոչ, Ե. Օտյանը պատասխանում է. «Երեսփոխաններէն մէկը հարցապնդում ուղղեց եւ պատասխան ստացաւ որ մեռած են։ Ոեւէ ցաւակցական արտայայտութիւն չեղաւ»[58]*։*

Ե. Գեղամյանը խոսելով Իշխանի եւ Ա. Վռամյանի սպանության շարժառիթների մասին համոզմունք է հայտնում, որ «պարզ չէ... այդ երկու գործիչների *(խոսքը՝ Իշխանի եւ Ա. Վռամյանի մասին է.–* Ա. Հ.*)* սպանման շարժառիթը»[59]*։ Ըստ հեղինակի միգուցե թուրքական կառավարությունը նրանց սպանեց անվստահ լինելով նրանց անկեղծության վրա եւ զգուշանալով, որ նրանք շարունակելու են* «հայ ժողովրդին զրգռել եւ լարել» թուրքերի դեմ»[60]*։*

Համանման կարծիք է հայտնում նաեւ Հ. արք. Նազլյանը։ Նրա համոզմամբ Թ. Ջեւդեթը կարծում էր, որ «անհետացնելով գլխաւորները, պիտի կարենար դիւրաւ նուաճել հայ ժողովրդեան մնացեալ մասը»[61]*։*

---

[56] *Տե՛ս* Հ. Ղազարեան, *Յեղասպան թուրքը, Պէյրութ, 1968, էջ 388–389։*

[57] Վ. Տատրեան, *Հայկական ցեղասպանութիւնը խորհրդարանային եւ պատմագիտական քննարկումներով. հայկական ցեղասպանութիւնը յետ-պատերազմեան օսմանեան խորհրդարանին մէջ, Բոստոն, 1995, էջ 44։*

[58] *Պէհպուտ խան Ճիվանշիրի սպանիչ Միսաք Թորլաքեանի դատավարութիւնը անգլ. զինուորական ատեանին առջեւ, Աթէնք, 1936, էջ 107։*

[59] Ե. ԱԻ. ՔՀՆՅ. Գեղամեան, *նշ. աշխ., էջ 611։*

[60] *Անդ, էջ 612։*

[61] *Տրապիզոնի թեմին վիճակաւոր Յովհաննէս արք. Նազլեանի յուշերը Մերձաւոր Արեւելքի 1914–1928 շրջանի քաղաքական-կրոնական դէպքերուն մասին, հտ. Ա., թարգմ.՝*

1915 թ. Ապրիլյան կռիվներից հետո Իշխանի եւ Ա. Վռամյանի նեխած եւ այլանդակված դիակները բերեցին Վան եւ համախումբ ժողովրդով հուղարկավորեցին դաշնակցության Վանի պանթեոնում՝ Արարուց եկեղեցու գերեզմանատանը[62]։

Դ. ԻՇԽԱՆԻ ԵՒ Ա. ՎՌԱՄՅԱՆԻ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ ԵՒ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ

Իշխանի եւ Ա. Վռամյանի ողբերգական նահատակումը իր խոր ազդեցությունը թողեց Վանի հետագա քաղաքական անցուդարձերի եւ մասնավորապես՝ 1915 թ. Ապրիլյան հերոսամարտի կազմակերպման գործընթացի արագացման վրա։ Ժամանակին այսպիսի տեսակետ է հայտնել ռազմապատմական հանձնաժողովի նախագահ, ռուս զինվորական՝ կազակ, գեներալ-լեյտենանտ Ա. Կուլեբյակինը, որի համոզմամբ Իշխանի եւ Ա. Վռամյանի սպանությունները դարձան Վանի Ապրիլյան հերոսամարտի կայծը, որը վառեց ապստամբության բուռն կրակը[63]։

*Համանման կարծիք է արտահայտում նաեւ Օ. Մխիթարյանը, երբ գրում է, որ «...*անոնցմէ մէկի անվերադարձ կորուստը եւ միւսի ստոյգ մահը եղան թերեւս ամենէն զօրաւոր մղիչ ու կազմակերպիչ ուժը Վանի երիտասարդութեան վիպական ու անձնուրաց հերոսամարտին։ Մտաւորական առաջնորդ Վռամեանի ձերբակալումն ու յեղափոխական ռազմիկ Իշխանի մահը ցնցեցին բոլոր արի եւ երկչոտ հոգիները եւ համոզեցին բոլորը ի միասին, որ այլեւս ուրիշ ճամբայ չկայ՝ բացի կռիւն ու ընդդիմութիւնը»[64]։

*Կուսակցական հայտնի գործիչների սպանությունը պատճառ դարձավ, որ «...*Դաշնակցութիւնն ու Հայութիւնը Վասպուրականի մէջ ցնցուին մինչեւ իրենց էութեան խորունկ արմատները, այլեւս ընդմիշտ փակուած տեսնեն պատրանքի, յոյսի եւ զիջումի բոլոր ճամբաները, գան կեդրոնանան համերաշխութեան փրկարար գետնին վրայ, ապաւինին իրենց բազուկին ու հանճարին, զինուին Իշխանի վրէժով եւ զայրոյթով եւ մահը որոնելով անմահութեան մէջ՝ կերտեն Վասպուրականի Ապրիլեան Գոյամարտը»[65]։

Համայեակ Ստեփանեանի, էջ 163։

[62] *Տե՛ս Հ. Պ ա ռ ո ղ ի, նշ. աշխ., էջ 81։*

[63] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1267, ց. 1, գ. 6, թ. 1–18։*

[64] Օ. Մ խ ի թ ա ր ե ա ն, *նշ. աշխ., էջ 43–44։*

[65] *Յուշապատում Հ. Յ. Դաշնակցութեան 1890–1950, Բոստոն, 1950, էջ 477։*

Իսկ Ն. Թեշտիմալճյանը նկատում է, որ Իշխանի ձերբակալությունից հետո «Վանի հայութիւնը վերահաս վտանգը տեսնելով, արագօրէն ինքնապաշտպանութիւնը կը կազմակերպէ եւ իր ունեցած աղքատ զինապահեստով թուրք-հիւրտ հորդաներու դէմ մահ ու կենաց պայքար կը մղէ»[66]։

Բանն այն էր, որ Իշխանը եւ Ա. Վռամյանը Վանի նահանգի հայ բնակչության շրջանում մեծ ժողովրդականություն վայելող գործիչներից էին։ Սկսած համիդյան շրջանից Իշխանը երկար տարիներ եղել էր Շատախի, Գավաշի եւ Կարկառի շրջանների հեղափոխական հրահանգիչ եւ ղեկավար։ Մարմնավորելով Վանի դաշնակցության ռազմական ողջ հզորությունը, նա միակ գործիչն էր, որ կարողանում էր կապ պահպանել բոլոր խավերի հետ եւ մուտք գործել իթթիհատական ակումբներ[67]։ Նա աչքի էր ընկնում իր մարտական կեցվածքով, ազդեցիկությամբ, որոշումներ կայացնելու ժամանակ անսասանելի էր, իսկ պայքարի ժամանակ անողորմ։ Իշխանն իրավամբ տաղանդավոր կազմակերպիչ էր եւ հանդուգն, անվախ ու անվիճարկելի առաջնորդ։ Նրա մասին Արամն իր հիշողություններում ներկայացնում է հետաքրքիր մի օրինակ. «Աղթամարի դպրոցի ամավերջին քննութեան ատեն, Հայոց պատմութեան դասի ժամանակ, երբ կհարցնեն, թէ հայերը այժմ թագաւոր ունի՞ն, պատասխանը կըլլայ «այո՛», երբ կը հարցնեն ո՞վ է - պատասխան կըլլայ Իշխան»[68]։ *Այդ առումով նա ամենավտանգավոր մարդն էր կառավարության համար։*

Ինչ վերաբերում էր Ա. Վռամյանին, ապա նա հանդիսանում էր առաջին կարգի հասարակական գործիչ, որն աչքի էր ընկնում իշխանությունների հետ իր անմիջական հարաբերություններով, որոշումներ կայացնելիս կտրուկ էր, խիստ էր քննադատությունների մեջ, անվերապահ էր եւ անկաշկանդ[69]։ Նա անխոնջ հեղափոխական էր, որը վաղուց հրաժարվել էր իր անձնական հետաքրքրություններից եւ ամբողջությամբ նվերվել էր կուսակցական աշխատանքին[70]։

---

[66] Ն. Թէշտիմալճեան, *Հայկական ցեղասպանութիւնը եւ պատմութիւնը նենգափոխողները, Պեյրութ, 1996, էջ 29։*

[67] *Տե՛ս* Վ. Փափազեան, *նշ. աշխ., էջ 21։*

[68] *«Աշխատանք», Վան, 1915 թ., յունիսի 6, թիւ 22–221, էջ 7։*

[69] *Նրա մասին Ե. Օտյանը նշում է. «Ազգային ժողովը Վռամեանի համար պատերազմի դաշտ մըն է, ուր պէտք է խոսքի ռազմամթերքով զինուած գալ»։ Տե՛ս* Ե. Օտեան, *Մեր երեսփոխանները, մեր ազգային ժողովը (36 լուսանկարով եւ 34 ծաղրանկարով), աշխատասիրութեամբ Գէորգ Տէր-Վարդանեանի, Երեւան, 1999, էջ 146։*

[70] *Տե՛ս* Оборона Вана, 7 апреля – 4 мая 1915 г., *էջ 24։*

Իշխանի եւ Ա. Վռամյանի նման հեղինակությունները խիստ անհրաժեշտ էին Վանի համար ճգնաժամային այդ բոպեներին, իսկ նրանց նկատմամբ կիրառված հաշվեհարդարը դիտարկվեց որպես հայության նկատմամբ համընդհանուր մարտահրավեր։ Սակայն, ըստ էության, այն սպասվող իրավիճակ էր։ Այդ մասին Եղ. Գեղամյանը գրում է. «Ամեն անգամ կռիւէ մը ետք, երբ Առամ մը, Վռամեան մը, կամ այսօր Իշխան մը կը մեկնեն միտքերը հանդարտեցնելու եւ կռիւն ընդհատելու, ամբոխը հոս իր երեւակայութիւններով կը հիւսէ անոնց մահուան վէպը ու կը ծլլայ հրապարակին վրայ»[71]։

Այդ էր պատճառը, որ երկու գործիչների սպանդը մեծ վրդովմունք, իրարանցում, սարսափ, վրեժխնդրություն եւ անորոշ տրամադրություններ ստեղծեց Վանի ժողովրդի բոլոր խավերի եւ հատկապես երիտասարդության շրջանում եւ «կարծես անաւոր երկրաշարժ մը հիմնայատակ ըրած է հոս ամեն ինչ բոպէաբար։ Կարծես ամպրոպը ճայթած է հոս անագնադողոդ...»[72]։ *Ա. Փոխարյանի մեկնաբանությամբ, այն* «ցնցող ու սթափեցուցիչ մի դեպք էր, որ միանգամից բացեց բոլոր թերահավատների ու տատանվողների աչքերը եւ ոտքի հանեց հայ ժողովրդին մեկ մարդու նման դիմելու միայն ու միայն ինքնապաշտպանության փրկարար գործին։ Վանի ժողովուրդը միանգամայն դուրս եկավ անորոշությունից, տատանվող վիճակից եւ կանգնեց պատնեշի վրա, մի սիրտ ու մի հոգի, վրեժխնդրության աստվածային ցասումն իր սրտում»[73]։

Հետագայում կգրվեր. «Վասպուրականը փրկուեց, թէեւ Վռամեանի, Իշխանի եւ վերջինիս ընկերակցող Վահան Խռանեանի, Քօթօ Պողոսի եւ Միհրան Տէր Մարգարեանի թանկագին կեանքերի գնով»[74]։

Շարունակությունը՝ հաջորդիվ

---

[71] Ե. ԱՒ. ՔՀՆՅ. ԳԵՂԱՄԵԱՆ, *նշ. աշխ., էջ 614։*

[72] *ՀԱԱ, ֆ. 450, ց. 1, գ. 45, թ. 46։*

[73] *Վան-Վասպուրականի հերոսամարտը. 75, Երեւան, 1990, էջ 21։*

[74] *Վասպուրական. Վան-Վասպուրականի Ապրիլեան հերոսամարտի տասնեւհինգ ամեակին առթիւ 1915–1930, Վենետիկ, 1930, էջ 21։*